

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԳԱՐԻԵԼՅԱՆ ԳԵՈՐԳԻ ՖԵԼԻՔՍԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920 Թ. ՄԱՅԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ**

**Է.00.01-«Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր**

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական ճանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար

պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Կարապետյան Մ. Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Հակոբյան Ա. Ս.

պատմական գիտությունների թեկնածու
Հարությունյան Ա. Ա.

Առաջատար կազմակերպություն Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. մարտի 16-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՎ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. փետրվարի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱՆՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ատենախոսության գիտական նշանակությունն ու արդիականությունը:

Հայաստանի առաջին Հանրապետության պատմության հատկապես 1920թ. մայիս-դեկտեմբերին ընդգրկող ժամանակահատվածն իր զարգացման բարդ ու հակասական ընթացքով հայոց նորագույն պատմության թեպետ կարճատև, բայց չափազանց կարևոր էջերից է: Ժամանակատվածի քաղաքական և դիվանագիտական գործընթացները հանգեցրին դարավոր կորստից հետո ստեղծված մեր նոր և ինքնատիպ պետականության կորստին, որի պատճառներին բազմիցս անդրադարձներ եղել են, և կարծում ենք՝ դարձյալ կլինեն՝ հատկապես մեր օրերի համար արդիական հնչողությամբ: Հայաստանն այսօր կանգնած է նոր մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտության առջև, որը պահանջում է պատմականորեն հիմնավորվող արտաքին քաղաքականության դոկտրինայի մշակում և որդեգրում: Ժամանակները փոխվել են, փոխվել են նաև քաղաքական վերաբերմունքների արտահայտության ձևերը, բայց խորքում նույնն են մնում թե գերտերությունների և թե մեր հարևան պետությունների նպատակադրումները: Դրանցում անհնար է ձշտորեն կողմնորոշվել առանց յուրացնելու Հայաստանի առաջին Հանրապետության պատմության բարդ դասերը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է արխիվային նյութերի, փաստաթղթերի ժողովածուների, մամուլի հրապարակումների և գիտական շրջանառության դրված այլ նյութերի համեմատական քննության միջոցով՝

Լուսաբանել Հայաստանի ներքին դրությունը 1920թ. գարնանը:

Երկրորդ. Բացահայտել մայիսյան ապստամբությանը հանգամանքները և արտաքին և ներքին պատճառները, որոնց հետևանքով ձախողվեցին Հայաստանի խորհրդայնացման ծրագրերը 1920թ. գարնանը:

Երրորդ. Վերլուծել Լ. Շանթի պատվիրակության բանակցությունները Խորհրդային Ռուսաստանի հետ, պարզել երկու կողմերի նպատակադրումները հունիս–հուլիս ամիսներին միմյանց նկատմամբ և դրանց անպատու վերջանալու դրդապատճառները, փորձել հիմնավորել Մոսկվայում հայ-թուրքական առանձին բանակցությունների գնալու անհրաժեշտությունը:

Չորրորդ. Վեր հանել Բ. Լեզրանի և քյուրո–կառավարության բանակցություններն օգոստոս–նոյեմբեր ամիսներին, գնահատել ինչպես այդ բանակցությունների, այնպես էլ օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրի արդյունքները: Կարևոր խնդիր ենք համարել նաև վերլուծության ենթարկել ռուս-թուրքական օգոստոսի 24-ի պայմանագրի նախագիծը:

Հինգերորդ. Գտնել այն հիմքերը, որոնք արդեն նոյեմբերին ստիպեցին Ռուսաստանին Հայաստանի հետ խոսել վերջնագրի լեզվով, ինչպես նաև, հիմնավորել՝ փոխհամաձայնեցված էին արդյոք գործում ռուսներն ու թուրքերն ընդդեմ Հայաստանի:

Այս հիմնական խնդիրները դնելով մեր առջև՝ դրանք լուսաբանելիս աշխատել ենք լինել անաչառ, հեռու զգացմունքայնությունից՝ առաջնորդվելով այն պարզ ճշմարտությամբ, որ յուրաքանչյուր տերություն ունի իր շահերը և եթե դրանք չեն համընկել մեր ժողովրդի շահերին՝ դրա համար կարելի է մեղադրել նաև մեզ, մեր քաղաքական ղեկավարներին, որոնք դարեր ի վեր կարծել են, թե

քրիստոնյա Արևմուտքը և Ռուսաստանը կփրկեն մեզ: Նրանց մեջ գրեթե միշտ իշխել է ռազմաքաղաքական դաշինքի՝ քաղաքական կույր կողմնորոշման հետ շփոթմունքը:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները: Ատենախոսության մեջ վերլուծության են ենթարկված Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի փոխհարաբերությունները 1920թ. մայիսից դեկտեմբերն ընդկրկող ժամանակահատվածում: Այս շրջանն իր հերթին ներկայացված է առանձին փուլերով: Որպես ՀՀ Խորհրդայնացման առաջին փուլ առանձնացված է 1920թ. մայիսը: Այնուհետև ներկայացված են ՀՀ-Ռուսաստան դիվանագիտական փոխհարաբերությունները հունիս-հուլիսին, օգոստոսից մինչև նոյեմբերի 23-ը, ապա՝ նոյեմբերի 23-ից՝ դեկտեմբերի 2-ը: Այսինքն ատենախոսությունն ավարտվում է Հայաստանի Խորհրդայնացման վերջին փուլի և դրա գործընթացի ավարտի վերլուծությամբ:

Հիմնահարցի աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրության աստիճանը: 1920թ. մայիսից դեկտեմբերն ընդգրկող ժամանակահատվածի Հայաստանի Հանրապետության՝ մասնավորապես Ռուսաստանի հետ քաղաքական և դիվանագիտական փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության համար առկա են բազմաթիվ սկզբնաղբյուրներ և պատմագիտական աշխատություններ: Սկզբնաղբյուրները բաժանվում են հրատարակված և չհրատարակված մասերի: Չհրատարակվածները պահպանվում են Հայաստանի Ազգային Արխիվի տարբեր ֆոնդերում (113, 200, 201, 276, 1021, 1022 և այլն): Աշխատանքը շարադրելիս օգտագործել ենք նաև Ռուսաստանի Դաշնության արխիվներում՝ Սոցիալ քաղաքական պատմության Ռուսաստանի պետական արխիվ (РГАСПИ)՝ ֆոնդ 85, 64, Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության արխիվ (АВПРФ)՝ ֆոնդ 04, 148, պահվող թեմային առնչվող որոշ փաստաթղթեր: Մեր ատենախոսության աղբյուրագիտական հիմքը չհրատարակված արխիվային նյութերից հետո կազմում են հրատարակված ժողովածուները¹:

Հուշագրային բնույթի սկզբնաղբյուրները մասնավորապես այս շրջանի վերաբերյալ հատկապես հրատարակվել են սփյուռքում և արժեքավոր են նրա համար, քանի որ դրանց հեղինակները խնդրո առարկա ժամանակաշրջանի

¹ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.), Երևան, 1972, Հայաստանի Հանրապետությունը (1918-1920թթ.), դեկ.՝ Վլ. Ղազարյանի, Երևան, 2000, Великая Октябрьская революция и победа Сожетской власти в Армении (Сборник документов), Ереван, 1957, Чичерин Г. В., Статьи и речи по вопросам международной политики, Москва, 1961, Нагорный Карабах в 1928-1923 гг., Сборник документов и материалов, Ереван, 1992, Казанджян Р., Советско-кемалистские отношения в 1920 г. и вопрос Армении в свете секретных документов московских архивов, "Страны и народы Ближнего и Среднего Востока", Ереван, 2002, Вып. 21, Барсегов Ю. Г., Геноцид Армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, Том 2, часть 1, Москва 2003. և այլն:

քաղաքական իրադարձությունների մասնակից և, շատ հաճախ, դրանց գլխավոր դերակատարներն են:

1920թ. մայիսից դեկտեմբերը ՀՀ և Ռուսաստանի միջև եղած փոխհարաբերություններին առնչվող պատմագիտական աշխատությունները բավականին շատ են: Կարծում ենք՝ ճիշտ կլինի այդ աշխատությունները բաժանել երեք մասերի.

ա) Աշխատություններ, որոնք ստեղծվել են խորհրդային շրջանում, և որոնցում մշակած պատմագիտական հայեցակարգերը հետևանք են կոմունիստական իշխող գաղափարախոսության պարտադրանքների, որը նշանակում է, որ կրում էին միակողմանի բնույթ²:

բ) Աշխատություններ, որոնք ստեղծվել են հետխորհրդային շրջանում՝ նոր մեթոդաբանությամբ և նոր հայեցակարգային մոտեցումներով՝ հակադրվելով խորհրդահայ պատմագրությանը³:

գ) Աշխատություններ, որոնք ստեղծվել են Սփյուռքում⁴: Դրանցում բնականաբար առատ են դաշնակցական գործիչների ստեղծած գործերը: Այդ

² Հարությունյան Ս., Արևելքի ժողովուրդների առաջին համազումարը, Երևան, 1960, Սահակյան Ռ., Խորհրդա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Երևան, 1964, Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1966, նույնի Գ.Կ. Օրջոնիկիձեն և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, Երևան, 1974, Կարապետյան Ս., 1920թ. Հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, 1965, Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ՊԱ հրատ., հ. 7, Երևան, 1967, Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1967, նույնի Победа Советской власти и возрождение армянского народа, Москва, 1982, Արզումանյան Ս., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, Ջոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները(1920-1922թթ.), Երևան, 1979, Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, Хейфец А., Советская Россия и сопредельные страны Востока в годы гражданской войны(1918-1920), Москва, 1964, Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, Москва, ч.1-2, 1928- 1929 և այլն:

³ Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, 1995, նույնի Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, Ջոհրաբյան Է., 1920թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1998, Փայտյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923թթ.), Երևան, 1999, Գևորգյան Հ., Դրո, Երևան, 1999, Սիմոնյան Ա., Ջանգեզուրի գոյամարտը (1920-1921թթ.), Երևան, 2000, Հակոբյան Ա., Հայաստանի Խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920թթ., Երևան, 2005, նույնի Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Երևան, 2006, Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922թթ., Երևան, 2007, Հայոց Պատմություն, հ. 4, գիրք 1, Նորագույն ժամանակաշրջան, (1918-1945թթ.), խմբագրակազմ՝ Վ. Ղազախեցյան և ուրիշներ, Երևան, 2010, Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ 1918-1920թթ., Երևան, 2011 և այլն:

⁴ Քաջազունի Յովհաննէս, Ղաջնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հտ., Է, Lou Անձէլոս, 1952, Կրացեան Ս.,

գործերում զարգացված է այն մոտեցումը, որ ՀՀ-ն զոհաբերվեց բոլշևիկ-քեմալական եղբայրությանը: Ընդհանուր առմամբ չի կարելի պնդել, թե այս մոտեցումը սխալ է. այն առկա է նաև որոշ բացառություններով, մյուս կուսակցությունների ստեղծած և ոչ կուսակցական, չեզոք պատմագրության մեջ: Բայց դրանցում չեն բացահայտված հայ-բոլշևիկյան և բոլշևիկ-քեմալական հարաբերությունների շատ նրբերանգներ:

Վերջապես, ատենախոսության շարադրման ընթացքում օգտագործել ենք պարբերական մամուլի շատ նյութեր, որոնք արխիվային նյութերից հետո երկրորդ կարևորագույն սկզբնաղբյուրներն են:

Ատենախոսության մեթոդական սկզբունքները: Ատենախոսությունն ստեղծվել է արխիվային հրապարակված և չհրապարակված սկզբնաղբյուրների, պարբերական մամուլի նյութերի, հուշագրությունների և պատմագիտական աշխատությունների հիման վրա: Մենք առաջնորդվել ենք պատմաքննական կամ պատմավերլուծական մեթոդով, որը հնարավորություն է տալիս պատմական իրադարձությունները ենթարկել տեսական ընդհանրացման:

Ռուսմասիրության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության գիտական նորույթը այն, որ այնտեղ փաստական նյութի քննական վերլուծությամբ ցույց է տրվում Հայաստանի ներքին բարդ կացությունը, որին 1920թ. զարնանից գումարվում է թուրք-ռուսական մերձեցմամբ ի հայտ եկած արտաքին վտանգը ևս: Ձևավորված ռուս-թուրք-ադրբեջանական մերձեցումը սպառնում է Հայաստանի անկախության գոյությանը, որի առաջին արտահայտությունը մայիսյան ասպատամբության կազմակերպումն էր:

Ատենախոսության մեջ ապացուցված է, որ Հայաստանի խորհրդայնացման գործընթացը համահունչ էր նրա բաժանման գործընթացին, թեպետ հստակ հիմքեր չկան պնդելու համար, որ հստակեցված էին Հայաստանից Թուրքիայի, Ռուսաստանի և Ադրբեջանի ստանալիք տարածքները: Հայաստանի խորհրդայնացման մայիսյան փորձն ամենևին այն հետևությանը չի հանգեցնում, որ նրա բաժանումն արդեն ծրագրված էր: Պարզապես, եթե այն հաջողվեր, համընթաց կլիներ նրա բաժանմանը, բայց դժվար է պնդել, թե ինչ բաժնեմասերով: Ատենախոսության մեջ փորձել ենք նորովի մեկնաբանել այն փաստը, որ ՀՀ կառավարությունը Ռուսաստանի հետ հարաբերություններում թեպետ անկեղծ է եղել, բայց իրականում նրա քաղաքական հակվածությունը ավելի շատ եղել է Անտանտի կողմը: Հայ-ռուսական դիվանագիտական

Հայաստանի Հանրապետության, Բեյրութ, 1958, Սասունի Կ., մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբ շրջանները, Պէյրութ, 1968, նույնի Հայ-թրքական պատերազմը, Բեյրութ, 1969, Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ Ընդի. ժողով (1890-1924), Աթէնք, 1988, Քիւրքճեան Յ., Ուրուագիծ Հ.Յ.Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի, Աթէնք, 1988, Արծրունի Վահե, Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը, Շատախ, Երեւան, 2002, Hovannisian Richard, The Republic Armenia, vol. 2, 1919-1920, Berkeley-Los Angeles-London, 1982, vol. 3, From London To Sevres, February August 1920, Berkeley-Los Angeles-London, 1996, vol. 4, Between and Sickle: Partition and Sovietization, Berkeley-Los Angeles- London, 1996, Ter-Minassian A., La République d'Arménie, Bruxelles, 1989, նույնի La Question Armenienne, Paris, 1983 և այլն:

փոխհարաբերություններում Ռուսաստանն սկզբում դրել է ոչ թե Հայաստանի խորհրդայնացման, այլ սուկ կողմնորոշումը փոխելու հարց: Կարևոր ենք համարել նաև այն փաստի նորովի մեկնաբանումը, ըստ որի, ռուսները՝ օգնելով քեմալականներին ընդդեմ Անտանտի, որն անուղակիորեն նշանակում էր նաև ընդդեմ Հայաստանի, ամենևին էլ չեն ցանկացել ողջ Հայաստանը նվիրաբերել նրան՝ ելնելով իրենց քաղաքական շահերից: Նպաստելով քեմալականների ուժեղացմանը՝ նրանք չեն ենթադրել, որ վերջիններս այդքան կխորանան Հայաստանի հետ պատերազմում, որը նույնպես չի կարելի պնդել, թե երկու կողմից էր ծրագրված և մասնավորապես Գ. Չիչերինը և Բ. Լեգրանը ձգտել են Հայաստանի խորհրդայնացմանը՝ այդ հիմքով թուրքերին կանգնեցնելու համար: Սակայն ՀՀ կառավարությունը մերժել է այդ առաջարկը: Այնտեղ նորովի գնահատական է տրվում հայկական պատվիրակության գործունեությանը՝ կապված հայ-թուրքական երկխոսության անհրաժեշտության չգիտակցման փաստի հետ: Կարծում ենք, որ տրամաբանությունից ոչ հեռու հարցադրումներով, որոնք բխում են իրական փաստերից, ապացուցվում է, թե ինչպիսի դրական հետևանքների կարող էր հանգեցնել Մոսկվայում գտնվող թուրքական պատվիրակության հետ երկխոսությունը: Դրան գնալով հնարավոր էր լինելու խուսափել հայ-թուրքական պատերազմից և մեղմացնել հայ-սաղրբեջանական հարաբերություններում առկա թշնամանքը: Համենայն դեպս այդ բանակցություններին գնալն, անկախ արդյունքից, դիվանագիտության տարրական պահանջն էր, որի ճշտությունն ուշացումով ըմբռնվեց:

Նոր փաստերով ենք փորձել գնահատել 1920թ. ռուս-թուրքական պայմանագրի նախագիծը, որի ստորագրումը բացասական ազդեցություն ունեցավ ՀՀ համար, քանի որ թուրքերը հնարավորություն ունեցան գրավելու երկաթգծի Շահախտ-Ջուլֆա հատվածը՝ շատ չանցած իրականացնելով իրենց հարձակումը ՀՀ վրա:

Նոր հայեցակետ է նաև այն, որ ռուսները, զինելով քեմալականներին, զգուշացել են նրա Հայաստանում շատ ծավալվելուց՝ վախենալով թուրք-սաղրբեջանական միավորումից, մյուս կողմից էլ՝ նրանց արշավանքի կասեցումը նպատակահարմար չեն համարել՝ վախենալով, որ Մ. Քեմալը կարող է հակվել դեպի Անտանտը: Այս պայմաններում նրան զսպելու միակ ճանապարհը ՀՀ խորհրդայնացումն էր: Արդյունքում ստացվում է, որ Ալեքսանդրապոլի անօրինական պայմանագրով Ռուսաստանի ճանաչած Հայաստանի սահմանները նախապես որոշված չեն եղել, այլ հետևանք են իրադարձությունների զարգացման, որոնք հայ քաղաքական ղեկավարները լուրջ հաշվեկշռի չեն ենթարկել:

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ նրա արդյունքները կարող են նպաստել հայոց նորագույն շրջանի պատմության հիշյալ հիմնահարցի շատ առումներով նորովի մեկնաբանմանը, մեր նորանկախ պետության զարգացման ընթացքում պատմության դասերի վրա հիմնված ճիշտ քաղաքականության ընտրությանը, նաև բուհերում և դպրոցներում 1920թ. իրադարձությունների մեր վերլուծած մասի նորովի մատուցմանը:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Ատենախոսության

ընդհանուր ծավալն է՝ 166 համակարգչային էջ:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան ՀՀՄՅ Հայոց պատմության ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթներն ու եզրակացությունները հրատարակվել են հեղինակի 4 հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտպանության ներկայացվող ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված ատենախոսության գիտական նորույթն ու արդիականությունը, նպատակն ու խնդիրները, հարցի ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության՝ «Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման գործընթացի սկիզբը» խորագրով առաջին գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին՝ «ՀՀ ներքաղաքական դրությունը 1920թ. գարնանը» ենթագլխում լուսաբանվում է 1920թ. սկզբներին Հայաստանի Հանրապետության ներքին բարդ կացությունը, որը թեպետ արտաքուստ կարծես կայուն էր, բայց իրականում մնում էր բարդ և հակասական: Դրանք թաթարական՝ միշտ ապստամբության պատրաստ շրջաններն էին, որոնք գաղտնորեն կապված էին թե Ադրբեջանին, և թե Թուրքիային և ամեն կերպ ձգտում էին Հայաստանի բաժանմանը: Պետք է նշել, որ նույն այդ ժամանակ Հայաստանի խորհրդայնացմանն ու ռուսական տիրապետության հաստատմանն էին ձգտում Հայաստանում ապստամբած հայ բոլշևիկները: Իրավիճակը պահանջում էր, անկախ դաշնակիցների վերաբերմունքից և նրանցից սպասելիքից՝ Հայաստանում ստեղծել ուժեղ իշխանություն:

Ինքը՝ վարչապետ Ալ.Խատիսյանը, մեր կարծիքով, վարում էր շատ թույլ ներքին քաղաքականություն: Այդ կառավարությունը հարմարվողական մոտեցումներ էր որդեգրել ներքին մահմեդական և այլ տարրերի նկատմամբ, ինչը չէին հանդուրժում կուսակցության ազդեցիկ դեմքերը: Երկրին ներսից և դրսից սպառնացող վտանգը պահանջում էր ուժեղ իշխանություն:

Ընդհանրացնելով շարադրվածը, շեշտենք, որ այսպիսով՝

Առաջին. 1920թ. սկզբներին Հայաստանի ներքին դրությունը անկայուն էր և պայթունավտանգ:

Երկրորդ. ներքին ապստամբ տարրերը՝ թաթարները գաղտնի քանդում էին հայոց անկախության հիմքերը:

Երրորդ. այդ դավադիր տարրերի նկատմամամբ կառավարությունը վարում էր անկախության ամրապնդման շահերից չբխող անդեմ քաղաքականություն:

Չորրորդ. հասունանում էր կուսակցական դիկտատուրա ստեղծելու անհրաժեշտության գաղափարը, որն իրականացնելու համար միայն փոքրիկ առիթն էր պակասում: Բայց այդ առիթը երկար սպասեցնել չտվեց: Դա Հայաստանի խորհրդայնացման գործընթացի սկիզբն էր:

Երկրորդ՝ «ՀՀ խորհրդայնացման առաջին փուլը և ծախողման պատճառները» ենթագլուխը նվիրված է Հայաստանի Հանրապետության

խորհրդայնացման գործընթացի սկզբին: Իրադարձությունների շարադրանքն սկսվում է մայիսի մեկից, որը բոլշևիկները նշանակում են «իրենց դիտավորությունների իրագործելու օր»⁵: Մինչև այդ Ադրբեջանը Հայաստանից սկսում է պահանջել Ղարաբաղը, Ջանգեզուրը, Նախիջևանը և Վեդի-Բասարը՝ որպես իր անբաժանելի մասեր⁶: 11-րդ կարմիր բանակը պետք է Հայաստան մտնել մայիսյան ապստամբության առիթով: Ընդ որում, ապստամբությունը ծրագրված էր սկսել Ղազախից, որը սահմանակից էր Ադրբեջանին: Ինչպես իրավացիորեն նկատել է պատմաբան Լ. Խուրշուրյանը. «Ղա ռուսական զորքերին հնարավորություն կտար հայ բոլշևիկների հրամանով անմիջապես մտնել ապստամբության շրջանը, այն ելակետ դարձնելով ամբողջ Հայաստանը գրավելու համար: Բայց, ոգևորված մայիսմեկյան ցույցերի հաջողությունից, բոլշևիկների Ալեքսանդրապոլի կազմակերպությունն իր վրա վերցրեց շարժման ղեկավարությունը և մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում Հայաստանը հռչակվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Ալեքսանդրապոլին հետևեցին Կարսի, Սարիղամիշի, Նոր Բայազետի, Դիլիջանի, Իջևանի, Շամշադինի և Ջանգեզուրի կազմակերպությունները»⁷:

Մայիսի 5-ին՝ առավոտյան ժամը 5-ին, տեղի է ունենում խորհրդարանի արտակարգ նիստ, որտեղ Ալ. Խատիսյանի կառավարությունը հրաժարական է տալիս: Կազմվում է բյուրո-կառավարություն Հ. Օհանջանյան գլխավորությամբ: Հաճախ կարծիք է շրջանառվում այն մասին, թե եթե մայիսի իշխանությունը հանձնվեր բոլշևիկներին, ապա հնարավոր էր ունենալ ավելի լայն սահմաններով Հայաստան: Այս տեսակետին չի կարելի համաձայնվել հետևյալ պատճառներով.

1) Խորհրդայնացումը հնարավոր չդարձավ, որովհետև անհրաժեշտ ուժեր չունեին հայ բոլշևիկները: Բացի այդ՝ Խորհրդային Ռուսաստանի կողմից այդ հարցը ժամանակավորապես հանվեց: Եվ նաև, քննալական Թուրքիան գործելու էր ի նպաստ Ադրբեջանի:

2) Անկախությունն ու ազատությունը վեր են ամեն ինչից և ՀՀ Կառավարությունը պարտավոր էր ամեն ինչի գնալ դրանց պահպանման համար:

Հայաստանի խորհրդայնացման գործընթացի առաջին փուլը ունենում է ձայնող ավարտ: Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման խնդիրը թևակոխում է նոր՝ բանակցային փուլ, որն սկսվում է Լ. Շանթի պատվիրակության հետ՝ Մոսկվայում և ավարտվում Բ.Եգորանի հետ կնքված համաձայնագրով՝ Երևանում:

Ատենախոսության՝ **«Խորհրդային Ռուսաստանի տեղը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կողմնորոշումներում 1920թ. հունիս-հուլիս ամիսներին»**, երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից: **Առաջին՝ «Լ. Շանթի բանակցությունները Մոսկվայում»** ենթագլխում վերլուծության են ենթարկվում Լ. Շանթի պատվիրակության հետ բանակցությունները: Ռուսական կողմից դրանց մասնակցում էր հիմնականում Լ. Կարախանը, իսկ երբեմն նաև Գ. Զիչեթրինը: Հայտնի է, որ դրանք անպտուղ վերջացան: Գ.

⁵ «Յառաջ», թիվ 99, Երևան, 14 մայիս 1920:

⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 274:

⁷ Խուրշուրյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, էջ 45:

Չիչերինի գեկուցումից հասկանալի է դառնում, որ Խորհրդային իշխանությունը պարզապես ուզում էր «միջնորդի դերում հանդես գալ Քեմալի և մեր միջև»⁸, պայմանով, որ հայերն անմիջապես ձեռք քաշեն դաշնակիցներից և Հայկական Հարցը դուրս բերելով Սևրում գումարվելիք խորհրդաժողովի օրակարգից՝ դնեն Մոսկվայի իրավարարության տակ: Հետաքրքիր այստեղ այն է, որ այս հանդիպման ժամանակ Գ. Չիչերինն ամենևին չի անդրադառնում Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի հարցերին, տարածքներ, որոնք վիճելի էին համարվում Հայաստանի և Ադրբեջանի միջև: Այն, որ այս տարածքների հօգուտ Ադրբեջանի լուծումը կար ռուսական արտաքին քաղաքականության օրակարգում, կասկածից զերծ է և դրանց՝ Ադրբեջանին խոստացած լինելու հանգամանքով պետք է նաև պայմանավորված համարել վերջինիս խորհրդայնացումը: Սակայն կարևոր ենք համարում շեշտել նաև մեկ ուրիշ հանգամանք՝ **Ռուսաստանը դեռևս վերջնականապես չէր ձևտել այդ տարածաշրջանների Ադրբեջանին նվիրաբերելու հարցը:** Նա այս հարցերում դեռևս առաջնորդվում էր խուսանավելու քաղաքականությամբ:

Ջանգեզուրի, Ղարաբաղի և Նախիջևանի խնդիրներում Գ. Չիչերինի մեկ հայանպաստ, մեկ թուրքանպաստ դիրքորոշումները պայմանավորված էին միայն ու միայն ռուսական արտաքին քաղաքականության շահերով, որի հիմքում այդ շրջանում ընկած էր համաշխարհային հեղափոխության հասնելու ցանկությունը: Իսկ դրանում հանձին քեմալական թուրքիայի նա փորձում էր գտնել իր աջակցին՝ նպաստելով վերջինիս հաղթանակին ընդդեմ դաշնակիցների: Սակայն այդ աջակցության մեջ լիարժեք համոզվելու համար նրան ժամանակ էր պետք, որն էլ ՀՀ պատվիրակության հետ բանակցությունների անպտուղ ավարտվելու պատճառներից մեկն էր:

Փաստերը վկայում են, որ 1920թ. հունիս ամսվա դրությամբ Ռուսաստանը հայերին օգնելու մեջ անկեղծ էր և այնքան էլ հակված չէր Ղարաբաղը, Ջանգեզուրը, Նախիջևանը և Շարուր-Ղարալազյազը տեսնել Ադրբեջանի մաս, ինչը վերջինիս երազանքն էր: Այդ շրջանում Գ. Չիչերինը նույնիսկ փորձեր էր անում զսպելու ագերիների ախորժակը և փոխզիջման եզրեր գտնել Հայաստանի և Ադրբեջանի միջև: Այդ նսպին է վկայում հունիսի 2-ի Գ. Չիչերինի նամակը Գ. Օրջոնիկիձեին. «Մեզ հարկավոր է հասնել փոխզիջման դաշնակցական կառավարության հետ: Ադրբեջանական կառավարությունը վիճելի է հայտարարում ոչ միայն Ղարաբաղը և Ջանգեզուրը, այլ նաև Շարուր-Ղարալազյազը: Վերջինս երբեք վիճելի չի եղել: ...Հայաստանը երբեք չի համաձայնվի դրան: Մեզ հարկավոր է այդ հարցում հասնել համաձայնության ադրբեջանական կառավարության հետ, որպեսզի մեր բանակցությունները Հայաստանի հետ չլինի Ադրբեջանի կողմից ներկայացված պահանջների մերժում: Հաշվի առնելով Ձեր ծանրակշիռ ներկայությունը Բաքվում, խնդրում են Ձեզ հասնել նրան, որպեսզի Ադրբեջանական կառավարությունը վիճելի ձանաչի Ղարաբաղը և Ջանգեզուրը, բայց ոչ Շարուր-Ղարալազյազը»⁹: Հունիսի 19-ին պատասխանելով Գ. Չիչերինի հեռագրին Գ. Օրջոնիկիձեին գրում է. «Ադրբեջանը պնդում է Ղարաբաղի,

⁸ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 219, թ. 256:

⁹ РГАСПИ, Ф. 85, оп. 13, д. 32, лл. 1-2.

Զանգեզուրի, Նախիջևանի և Շարուր-Ղարալազյազի համար: ...Ադրբեջանը առանց Ղարաբաղի և Զանգեզուրի գոյատևել չի կարող»¹⁰:

Այսպիսով. ա) Լ. Շանթի պատվիրակության բանակցությունների օրերին Խորհրդային Ռուսաստանը դեռևս դիրքորոշումների ճշտելով պայմանավորված վերջնականապես չէր թեքվել դեպի Թուրքիան և սեթևեթում էր Հայաստանի, նրա և Ադրբեջանի միջև, բ) նա առաջնորդվում էր իր իսկ քաղաքական շահերով և ըստ դրանց թելադրանքի էլ հարաբերվում էր Հայաստանի հետ:

Երբ ստորագրվեց Սևրի դաշնագիրը, Ռուսաստանը կտրուկ կերպով շրջվեց դեպի Թուրքիան և զավթողական դիրքորոշում որդեգրեց ՀՀ հանդեպ՝ նրան ընկալելով որպես Անտանտի դաշնակից: Դրանում, հարկավ, իրենց սխալներն ունեցան նաև հայ քաղաքական ղեկավարները: Այդ սխալներն սկսվեցին Մոսկվայից, երբ առանձին բանակցությունների մեջ չմտան թուրքերի հետ, որը կարող էր դրականորեն անդադառնալ ռուսների հետ բանակցությունների վրա:

Երկրորդ ենթազխում քննարկվում է «Մոսկվայում հայ-թուրքական բանակցությունների անհրաժեշտության հարցը և դրանց հնարավոր հետևանքները»: Այս խնդրին մեր պատմագրությունը գրեթե չի անդրադարձել, այն դեպքում, երբ կարծում ենք, որ այսօրվա հեռավորությունից այն լուրջ եզրակացությունների տեղիք է տալիս: Պատվիրակության անդամներից Ա. Տերտեռյանը և Լ. Զարաֆյանը կողմ էին դրան, փորձում էին նույնիսկ բանակցություններ վարել, բայց Լ. Շանթն այդ արգելում է: Այդ մասին Ա. Տերտեռյանը գրում է. «...Մոսկուայում էր գտնուում Թուրք Ազգային Մեծ Ժողովի պատուիրակութունը Բէքիր-Սամի բէյի գլխաւորութեամբ, Ես եւ Լեւոն Զարաֆեանը առաջարկեցինք ընկ. Լ. Շանթին մասնաւոր տեսակցութիւններ ունենալու թուրք պատուիրակութեան հետ եւ աշխատելու իրարհասկացողութեան գալ տաճիկների հետ, իսկ եթէ այդ չյաջողուէր, գոնէ շօշափած կը լինէինք իրենց տրամադրութիւնները: Առաջարկ քերողներս այն կարծիքին էինք, որ տաճիկները զոհ պիտի մնային, եթէ մենք կարողանայինք երկուստեք գոյութիւն ունեցող վէճերը կարգադրել առանց Սովետական Ռուսաստանի միջամտութեան: Տաճիկները աւելի պատճառներ ունէին կասկածանքով մօտենալու սովետական կառավարութեան բարեկամական անկեղծ զգացմունքներին, քան թէ մենք՝ հայերս: ...Բայց եւ այնպէս ընկ. Շանթը բուռն կերպով ըննդիմացաւ թուրքերի հետ տեսակցութեան գաղափարին:

Հ. Տերտեռյանը գրում է, որ ցավով են հետ կանգնել բանակցելու մտադրությունից՝ տեղի տալով Շանթի զգացմունքային պահվածքին: Իսկ եթե այդ հարաբերություններն անկեղծ չէին, նշանակում է՝ կարող էին հայ-թուրքական բանակցությունները հաջող կամ դրական ելք ունենալ, եթե կայանային: Հասկանալի է, որ թուրքերը նույնպես, ինչպես և բուլշևիկները պետք է պահանջեին, որ հայերն հրաժարվեին դաշնակիցներից, ինչը դուրսին խնդիր չէր: Բայց տվյալ իրավիճակում թերևս դա ավելի ճիշտ կլիներ և այս դեպքում ամենայն հավանականությամբ չէր կայանա հայ-թուրքական վերջին պատերազմը: Քեմալի համար հաշտությունը ցանկալի էր հենց Լ. Շանթի բանակցությունների օրերին, երբ Մոսկվայի թուրք պատվիրակության վիճակն էլ

¹⁰ Սույն տեղում, թ. 3.

այնքան բարվոք չէր և Գ. Չիչերինը տանում էր խուսանավողական քաղաքականություն:

Հնարավոր էր արդյոք, որ թուրքերը հայերի հետ բանակցելու դեպքում տարածքային գիշումների գնային: Կարծում ենք, որ հնարավոր էր, եթե հայերը կամ հրաժարվեին դաշնակիցներից կամ էլ նրանց սպասելիքներին զուգահեռ բանակցեին թուրքերի հետ: Եթե Լ. Շանթը առաջնորդվեր ոչ թե հույզերով, այլ սառը բանականությամբ, ապա՝ հնարավոր է, որ Մոսկվայում ստորագրվեր հայ-ռուսական համաձայնագրի նախագիծը և ավելի ամրապնդվեր Խորհրդային Ռուսաստանի տեղը ՀՀ արտաքին քաղաքականության կողմնորոշումներում: Հնարավոր է, որ Ջանգեզուրի և Նախիջևանի հարցում բողոքեր Ադրբեջանը, բայց գոնե դրանով կկասեցվեր ռուս-ադրբեջանական համատեղ հարձակումը հիշյալ տարածքների և Ջանգեզուրի վրա: Ոչ մեկը չի կարող վերջնականապես հերքել, որ քեմալականներից ավելի նեղ տարածքներ պահանջելու դեպքում՝ վերջիններս կհարձակվեին Հայաստանի վրա և դաշնակիցների դեմ նրանց և բուլշևիկների դաշինքը ուղղված չէր լինի նաև Հայաստանի դեմ: Անշուշտ, Հայաստանը վերջը կխորհրդայնացվեր, բայց ամենայն հավանականությամբ ավելի լայն սահմաններով: Չէ՞ որ Կրաստանը, որը Ռուսաստանի հետ 1920թ. հունիսի 7-ին կնքել էր իր անվտանգությունն ու անկախությունն երաշխավորող պայմանագիր, նույնպես բռնությամբ խորհրդայնացվեց: Բայց այստեղ խնդիրը վերաբերվում է նրան, որ ՀՀ քաղաքական ղեկավարության միջև ընդհանրության չէր հասել այն համոզմունքը, որ պետք էր ամեն կերպ լեզու գտնել թուրքերի հետ, որն ինչ որ տեղ նշանակում էր ռուսների հետ և այդ դեպքում աննախադեպ բաժանման չէր ենթարկվի Հայաստանը 1920-21 թթ.:

Հայ-թուրքական փոխգիշումային համաձայնությունը դրական հետևանքների կարող էր բերել թե հայ-ռուսական և թե հայ-ադրբեջանական հարաբերությունների առումով: Դրանց չկայացումը հանգեցրեց Հայաստանի մեկուսացմանը:

Ատենախոսության «Բ. Լեզրանի և ՀՀ բյուրո-կառավարության բանակցությունները» խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ «1920թ. օգոստոսի 10-ի հայ ռուսական համաձայնագիրը» ենթագլուխը նվիրված է օգոստոսի 10-ի համաձայնագրին և դրա ծախսողման պատճառներին: Հայ պատվիրակների նպատակն էր վերջ տալ Ջանգեզուրում, Նախիջևանում և Ղազախում տեղի ունեցող ռազմական գործողություններին, որոնք ընթանում էին հայկական և խորհրդային զորքերի միջև: Հայաստանի կառավարությունն իր պատվիրակության միջոցով Բ. Լեզրանին է ներկայացնում մի շարք առաջարկությունները: Սակայն, հայկական կողմի պահանջներն ամբողջությամբ չեն բավարարվում և օգոստոսի 10 -ին կնքվում է պայմանագիր, որով. ՌՍՖՍՀ-ի զորքերը գրավելու էին վիճելի մարզերը՝ Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը: Այդ ժամանակավոր գրավումով ՌՍՖՍՀ-ը նպատակ ուներ ստեղծել բարենպաստ պայմաններ՝ Հայաստանի և Ադրբեջանի տարածքային վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու համար:

Երկաթգծի Շահախախտ-Ձուլֆա հատվածի շահագործման իրավունքը տրվում էր Հայաստանի երկաթուղային ձևապարհների վարչությանը, պայմանով, որ այն չօգտագործվի ռազմական նպատակներով¹¹:

Այս պայմանագիրը սակայն չի իրականանում հետևյալ պատճառներով.

Առաջին. Խորհրդային Ռուսաստանը դեռևս քաղաքացիական կռիվները ամբողջովին հօգուտ իրեն չավարտած՝ դանդաղեցնում էր նոր ձևակառուցման բացումը Հայաստանի և Վրաստանի հետ, որոնց խորհրդայնացումը ծրագրված էր:

Երկրորդ. Թեպետ համոզված էր, որ Պ. Վրանգելի դեմ հաղթանակն իրենն է, քանի դեռ նրան վերջնականապես չէր ջախջախել, ձգձգում էր թուրքերին տված խոստումները:

Երրորդ. Օգոստոսի 10-ի համաձայնագրով բուլշևիկները ձգձգում էին Հայաստանի խորհրդայնացումը՝ պայմանավորված դարձյալ քաղաքացիական կռիվներով, մինչև որոնց վերջը չէին ուզում Ադրբեջանի մաս տեսնել Ղարաբաղը, Ձանգեզուրն ու Նախիջևանը:

Չորրորդ. Քեմալականները, չնայած իրենց բարդ կացությանը, հավատացած էին, որ ռուսներն օգնելու են իրենց:

Խորհրդային Ռուսաստանը կնքելով այդ համաձայնագիրը հայկական կողմի նկատմամբ ամենևին անկեղծ չէր: Նա ձգտում էր ժամանակ շահել Պ. Վրանգելի հարձակումը զսպելու համար, որն արգելք էր հանդիսանում լիարժեք դրսևորվելու քեմալականների հետ նախատեսած իր ծրագրերի մեջ:

Փաստորեն ՀՀ խորհրդայնացման առաջին ծրագիրը ծախողվեց մայիսին՝ լեհական հարձակման հետևանքով, իսկ այնուհետև՝ Պ. Վրանգելի: Վերջինիս պարտությունից հետո արդեն ռուսների ձեռքերն ազատ էին. Հայաստանը համարվում էր Անտանտի դաշնակից, վերջինիս դեմ պայքարելու համար միավորվելով Մ. Քեմալի հետ: Նրա հետ ծրագրած դավադրությունը թևակոխում էր նոր փուլ:

Երկրորդ ենթազվխում ներկայացվում է «1920թ. օգոստոսի 24-ի ռուս-թուրքական պայմանագրի նախագիծը և դրա անդրադարձները հայ-ռուսական հարաբերությունների վրա», Հիմնավորվում է, որ այն բացասաբար է անդրադառնում հայ-ռուսական հարաբերությունների վրա: 1920թ. օգոստոսի երկրորդ կեսից Խորհրդային Ռուսաստանի վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ կտրուկ կերպով փոխվում է: Այդ վերաբերմունքի փոփոխության վրա բացասաբար է ներգործում Պ. Վրանգելի պարտությունը, որից հետո դաշնակիցներին նեղուցներից քշելու անհրաժեշտությամբ պայմանավորված ռուսները վերջնականապես գնում են քեմալականների հետ դաշինքին, և ինչպես ընդունված է ասել՝ ՀՀ կառավարության արևմտյան կողմնորոշումը: Այս ամենով հանդերձ՝ Հայաստանում անմիջապես խորհրդայնացման հարց չդրվեց, և Բ. Լեգրանն առաջնորդվեց սեթեթելու քաղաքականությամբ:

Այս համաձայնագրի¹² մեկ-երկու կետեր անուղղակիորեն ուղղված էին ՀՀ դեմ: Հատկապես կարևոր է այն, որ Ռուսաստանը չէր ձանաչելու Թուրքիային

¹¹ Барсегов Ю. Г., ցվ. աշխ., էջ 125.

¹² Համաձայնագիրը տես Ali Fuat Gebesoy, ցվ. աշխ., էջ 80, ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 17, թ. 10:

վերաբերվող որևէ համաձայնագիր, որը չէր վավերացվի ԹԱՄԺ-ի կողմից: Ստացվում է, որ Ռուսաստանը չէր ճանաչում Սևրի պայմանագիրը, որը լուրջ հարված էր Հայաստանի Հանրապետությանը: Վերջինիս առավել դաժան հարված էր համաձայնագրի 3-րդ կետը, որով նախատեսվում էր ամենակարճ ժամկետներում երկու երկրների միջև մարդկանց և ապրանքների տեղափոխությունն ապահովել: Սա արդեն նշանակում էր Թուրքիային հնարավորության ընձեռում՝ Հայաստանի վրա հարձակվելու համար:

Գ. Չիչերինը և խորհրդային շատ գործիչներ հավատացին, որ թուրքերը Սարիղամիշ-Շահթախտ գծից այն կողմ չեն անցնի: Այս համոզմունքով թերևս պետք է բացատրել այն, որ օգոստոսի 23-ին Գ. Չիչերինին գրած նամակում Կիրովը նույնպես գտնում է, որ հիշյալ տարածքը թուրքերի կողմից գրավելը նպատակահարմար է¹³: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ ռուսները հօգուտ հայերի ոչ մի քայլի չգնացին և ելնելով դաշնակիցների դեմ պայքարում Թուրքիային չկորցնելու վախից, նրան զիջեցին Արևմտյան Հայաստանը, որի գրավումը ցարերի դարավոր երազանքն էր: Մեր ձեռքի տակ կա ևս մեկ վկայություն այն մասին, որ ռուսական կողմը թուրքերին թույլ են տվել հարձակվելու ՀՀ վրա: Հոկտեմբերի 5-ին Ռուսաստանի կոմկուսի քաղաքապետի գրած նամակում Գ. Չիչերինը գրում է. «Թուրքերի հետ եղել է համաձայնություն, որ մեր հետ անմիջապես կապ հաստատելու համար, նրանք պետք է մեզանից անկախ գրավեն Սարիղամիշ-Շահթախթ գիծը: ...Եղել է համաձայնություն, որ թուրքերը Սարիղամիշ-Շահթախթ գծից այն կողմ չպետք է անցնեն, սակայն Օրջոնիկիձեի տվյալներով, թուրքերը լուրջ հարձակում են սկսել Կարսի ուղղությամբ»¹⁴:

Թուրքիայի բարոյական ճնշումը Ռուսաստանի վրա, այն վախի ներշնչումով, որ ազգայնական շարժումը Անատոլիայում կտապավի նրան Հայաստանի վրայով չմիավորվելու դեպքում, հաստատում է նաև Ա. Խեյֆեցը, գրելով, որ սեպտեմբերի 18-ին Թուրքիայում Ռուսաստանի ներկայացուցիչ Շալուա Էլիավան Բաքվից հեռագրում է Մոսկվա՝ Գ. Չիչերինին այն մասին, որ Ս. Քեմալը, Ք. Կարաբեքիրը և Խալիլը գտնում են, որ եթե շարունակվի Թուրքիայի շրջափակումը մեկ-երկու ամիս, ապա անատոլիական շարժումը կվերանա նույն աշնանը¹⁵: Այս ամենից եզրակացությունը մեկն է՝ Ռուսաստանը չէր կարող զսպել թուրքերի Շահթախտ-Նախիջևան գծից առաջացումը, ինչքան էլ դա նրա համար լիներ անցանկալի: Ստեղծված պայմաններում բոլշևիկներին մնում էր գնալ Հայաստանի խորհրդայնացմանը, որը թուրքական առաջխաղացման դեպքում արդեն պետք է նշանակեր Հայաստանի բաժանում, իսկ Հայաստանի Հանրապետությանն՝ ապավինել իր ուժերին, որն արդեն տարբեր պատճառներով խոստումնալից ուղի չէր:

Երրորդ՝ «**Բանակցությունները Բ. Լեգրանի հետ Երևանում: Հոկտեմբերի 28-ի համաձայնագրի նախագիծը**» ենթագլուխը նվիրված էրևանում Բ. Լեգրանի հետ կնքված հայ-ռուսական դաշնագրի նախագծին և դրա չիրականացման պատճառներին:

¹³ Хейфец А. Н., նշվ. աշխ., էջ 131.

¹⁴ АВПР, Ф. 04, оп. 39, п. 232, д. 52987, л. 40.

¹⁵ Хейфец А. Н., նշվ. աշխ., էջ 131.

Այս շրջանում արդեն՝ ա) Խորհրդային Ռուսաստանին ամենևին ձեռնտու չէր ամբողջ Հայաստանի թուրքերի կողմից գրավումը, բ) Հայաստանի Խորհրդայնացման հարց դեռևս չէր դրվում ուժերի անբավարար լինելու, հնարավոր դիմադրության և թուրքերին այդ նպատակով օգտագործելու աննպատակահարմարության պատճառով, գ) Բ. Լեգրանը ձգտում էր հասնել նրան, որ Հայաստանը մաքրվի թուրքական զորքերից:

Սակայն, այս ամենը կախված էր Հայաստանի կառավարության վերաբերմունքից, որին հոկտեմբերի 13–ին Բ. Լեգրանը ներկայացնում է վերջնագիր, սակայն ՀՀ կառավարությունը մերժելով Սևրի պայմանագրից հրաժարվելու պահանջը, մյուս պահանջների վերաբերյալ կայանում է համաձայնություն և կազմվում նախագիծ¹⁶, որը չի ստորագրվում հետևյալ պատճառներով: 1) Թեպետ պայմանագի կետերում այդ մասին չի նշվում, բայց Հայաստանը չի հրաժարվում Սևրի պայմանագրից, 2) Հայաստանի Խորհրդայնացման հարցը նույնպես չէր դրվում, բայց առանց դրա Խորհրդային Ռուսաստանը չէր կարող կանխել թուրքական առաջխաղացումը, որը նրան այնքան էլ ձեռնտու չէր, 3) Հայերի՝ Անտանտի դաշնակից ընկալվելու պայմաններում բավական բարդ էր վիճելի տարածքները, թեկուզ և Ջանգեզուրը, ձանաչել Հայաստանի մաս:

Այսպիսով ընթանում էր թուրք–ռուսական մրցակցություն Հայաստանին տիրելու և այն բաժանելու համար, առանց սահմանների վերջնական ձգարտման: Քեմալականները սոցիալիստի դիմակ էին հագել: Հայկական բանակը չէր դրսևորում անհրաժեշտ մարտունակություն: Ուրեմն հետևությունը մեկը պետք է լիներ՝ անհրաժեշտ է, որ Հայաստանն էլ կարմիր դիմակ հագնի: Բայց այս ըմբռնումը տակավին չկար և երբ ղեկավար շրջանակներում հասավ որոշակի ընդհանրության, արդեն շատ ուշ էր:

Եզրակացությունները հետևյալներն են.

Առաջին. Փաստորեն Արևմուտքը ամեն կերպ ձգտել է խոչընդոտել կովկասյան ժողովուրդների, այդ թվում, նաև հայերի՝ դեպի Ռուսաստան կողմնորոշումը: Հայաստանի կառավարությունը չէր կարող դա անտեսել, քանզի նրա նյութական աջակցությամբ էր սպառազինել իր բանակը, վերականգնել երկրի տնտեսությունը և այլն: Սա նշանակում է՝ ոյուրին խնդիր չէր նրանից հրաժարվելը, մանավանդ Սևրի դաշնագրից, ինչին ձգտում էր Ռուսաստանը: Իսկ Արևմուտքից կառչած մնալը նպաստում էր Թուրքիային, Ադրբեջանին և ՌԿ(Բ)Կ թուրքամետ ներկայացուցիչներին՝ խոչընդոտելու այդ համաձայնագրի ստորագրմանը:

Երկրորդ. Դաշնակիցները չեն կարողանում հասնել կովկասյան հանրապետությունների դաշինքին, գոնե հայ-վրացական և որ շատ կարևոր է, նրանք արդեն չունեին հստակ առաջարկներ իրենց կովկասյան ներկայացուցիչներին՝ ընդդեմ բոլշևիկների: Իսկ Վրաստանի մերժումը պետք է հիմք հանդիսանար ուժեղացնելու հակվածությունը դեպի Ռուսաստանը, որը

¹⁶ Այս համաձայնագրի կետերը որոշ տարբերություններով ներկայացրել են շատերը: Տես Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 261-262, Իրագել Յ., Մօտիկ անցեալից, Պէյրուք, 1956, էջ 70, «Հայրենիք» ամսագիր, թիւ 5, Պոստոն, 1954, էջ 10-11: Արձանագրության ամբողջ տեքստը տես նաև՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 632, թ. 1-5 և 11:

դեռևս Թուրքիայի հետ չէր գծել Կովկասյան սահմանները Ավելին, անգլիական կառավարությունն էլ արդեն երկփեղկվում էր՝ բոլշևիկների հետ համաձայնության առումով: **Հայ դիվանագիտության պարտության վկայությունն էր այն, որ այն դեպքում երբ Անտանտն էր փորձում լեզու գտնել բոլշևիկների և քեմալականների հետ, դեռևս հույսեր էր կապում այդ նույն դաշնակիցների հետ:**

Այստեղից հետևությունը մեկն է՝ Հայաստանի խորհրդայնացումը հիմք կհանդիսանար թուրքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար: Ռուսաստանը, անկախ կայացած որոշումից, քաղաքական առումով նպատակահարմար չէր համարում կարմիր բանակ մտցնել Հայաստան, զգուշանալով Անտանտից և հատկապես Թուրքիայի շրջադարձից դեպի Արևմուտք, ինչպես նաև հայկական դիմադրությունից: Համաձայնագրի կետերի իրականացումն ինքնին կնշանակեր ընդհարում Թուրքիայի և Ադրբեջանի հետ, որը նրան ամենևին ձեռնտու չէր: Այն տպավորությունն էր ստացվելու, որ զինելով Թուրքիային ընդդեմ դաշնակիցների՝ Ռուսաստանը պայքար էր մղելու դրանց դաշնակից ճանաչված Հայաստանի դեմ: Գուցե առարկություններ կլինեն, թե կար ռուս-թուրքական զաղտնի համաձայնագիր, բայց նման համաձայնագիր, որով վերջնականապես հստակեցված էին հայկական տարածքների ռուս, թուրք կամ ադրբեջանական կողմերին պատկանելիության հարցերը, տակավին գոյություն չուներ:

Ատենախոսության չորրորդ գլուխը վերնագրված է՝ **«Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման գործընթացի ավարտական փուլը»:** Այն բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում վերլուծության են ենթարկվում **«Բ. Լեգրանի և բյուրո-կառավարության վերջին բանակցությունները և դրանց արդյունքները»:** Այս շրջանում ՀՀ խորհրդայնացումը Ռուսաստանի համար դառնում է հրատապ, որովհետև հակառակ դեպքում չէր բացառվելու ողջ Հայաստանի գրավումը և թուրքերի միավորումը Ադրբեջանին, որը նրա համար ոչ թե ցանկալի չէր, այլ հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Մեր խորին համոզմամբ հարցն այսպես էր դրված՝ կամ Հայաստանը պետք է խորհրդայնացվեր կամ Ռուսաստանը պետք է դեմ առ դեմ կանգներ թուրքերի դեմ, որը վերջինիս կկողմնորոշեր դեպի Անտանտը: Չէ որ վերջինս պատրաստ էր Հայաստանը զոհաբերելու գնով՝ Մ. Քեմալին քաշել իր կողմը: Այնպես, որ Բ. Լեգրանն ՀՀ իշխանությունների հետ խոսելու էր ավելի կոշտ լեզվով:

ՀՀ կառավարությունը թուրքերի հետ բանակցությունները վարելու խնդրանքով դիմում է Ալ. Խատիսյանին: Բայց նա նախ մեկնում է Թիֆլիս՝ պարզելու, թե ինչ աջակցություն կարող է սպասել Հայաստանը դաշնակիցներից, սակայն մի ավելորդ անգամ ևս համոզում է, որ դաշնակիցները արդեն ձեռք են քաշել Հայաստանից:

Տարվելով դաշնակիցներով՝ Հայաստանն անտեղի ուշացրեց երկխոսությունն այս երկու երկրների հետ, խորհրդային դառնալու պայմանով, արդյունքում խաբված մնալով նույն դաշնակիցներից:

Թուրքերը իսկապես ուզեցել են հայերի հետ հաշտության գնալ՝ առանց ռուսական միջնորդության: Եվ կարևոր է, որ դա խոստովանում է հենց Ալ. Խատիսյանը: Սա նշանակում է, որ տեղին չի խոսելը խորհրդային

Ռուսաստանի և Թուրքիայի միջև Հայաստանի վերջնական պայմանավորվածության մասին: Անվիճելի ճշմարտություն է, որ մինչև Ալեքսանդրապոլի համաձայնագիրը և դեռևս դրանից հետո, մինչև 1921թ. մարտի 21-ի պայմանագիրը Ռուսաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև Հայաստանի վերջնական բաժանում չի եղել: **Բայց այնտեղ, որտեղ հնարավոր է եղել կանգնեցնել թուրքերին, եղել է նախնական սահմանագիծը, որը մղում է դարձյալ այն եզրակացությանը, որ Հայաստանի խորհրդայնացումը համահունչ էր նրա բաժանմանը:**

Այսպիսով, թուրքերը հասկանալով, որ Ալեքսանդրապոլից առաջ չարժվելը թերևս այնքան էլ նպատակահարմար չի, մտնում են բանակցությունների մեջ: Իսկ Երևան հասած Բ. Լեզրանը բանակցությունների մեջ է մտնում բյուրո-կառավարության հետ՝ Հայաստանը խորհրդայնացնելու հաստատ նպատակով: Բայց այս անգամ արդեն այդ քայլը ուշացած էր՝ թուրքերին հարձակման վերջին գծից հետ վանելու առումով: Բյուրո-կառավարությունն արդեն ուշացել էր, իսկ Ռուսաստանը Հայաստանի խորհրդային հռչակված լինելու պարագայում էլ չէր կամենա Թուրքերին ստիպել նահանջել:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է «**Հայաստանի վերջին կառավարության բանակցությունները Բ. Լեզրանի հետ: Խորհրդայնացման գործընթացի ավարտը** Նոյեմբերի 23-ին, կազմվում է ՀՀ վերջին կառավարությունը՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ, որի ամենաառանցքային դեմքը թերևս Դրոն էր:

Հետաքրքիր է Ս. Վրացյանի կառավարության քաղաքական դիրքորոշումն ստեղծված պայմաններում. «Մի կողմից բանակցելով Լեզրանի հետ մենք միև կողմից աշխատում էինք արագացնել հաշտութեան բանակցութիւնները: Ռուսական զորամասեր Հայաստան մտցնելուց մենք խուսափում էինք՝ այդ քայլը նկատելով ոչ միայն մահ անկախութեան համար, այլև առիթ պատերազմը թուրքերի հետ վերսկսելու եւ Հայաստանի մնացած մասերն էլ թուրքերի ոտքի կոխան դարձնելու: Ոմանց մեջ հույս կար նաեւ, որ թուրքերը, նախատեսելով ռուսական միջամտութիւնը, կը լինեն չափաւոր և հայերին չեն մղի բոլշեւիկների գիրկը: Նրանց շահերի տեսակէտից աւելի գերադասելի պիտի լինէր իրենց կողքին ունենալ անկախ Հայաստան, քան բոլշիկներին, որոնք, վերջ ի վերջոյ, նոյն ժուսներն էին եւ որոնց արտաքին քաղաքականութիւնը, ըստ էութեան, կրկնութիւնն էր Սազոնովների և Միլիկովների աշխարհակալական ծրագիրների»¹⁷:

Ցավոք, այս անգամ իրավիճակը բոլորովին այլ քայլեր էր թելադրում: Թուրքերն ու ռուսներն այս անգամ պատերազմական դրության մեջ չէին միմյանց հանդեպ և գլորբալ հարցերում լինելով դաշնակիցներ, իրար հետ պայքար էին մղում Հայաստանը բաժանելու համար:

Նոյեմբերի 28-ին Հայաստանի սահմանի մոտ կուտակվում են կարմիր զորքեր, իսկ հաջորդ օրը մի քանի զորամասեր մտնում են Քարվանսարա: Նոյեմբերի 30-ին Բ. Լեզրանը Ս. Վրացյանին ՀՀ խորհրդայնացման որոշման մասին: Դեկտեմբերի 2-ին համաձայնագիր է ստորագրվում Բ. Լեզրանի, մյուս

¹⁷ Նույն տեղում, էջ 189:

կողմից՝ Դրոյի և Հ. Տերտերյանի միջև, բաղկացած ութը կետերից¹⁸: Այսպիսով, ավարտվում է Հայաստանի խորհրդայնացման գործընթացը, որը թերևս նպատակահարմար էր ավելի շուտ կատարել, թեպետ դյուրին չէր ձիշտ կողմնորոշվելը Ռուսաստան-Թուրքիա-Անտանտ օղակի դավադիր խաղերի մեջ:

Իսկ կարո՞ղ էր Ալ. Խատիսյանը չստորագրել Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Մինչև այդ նշենք, որ այն ստորագրվել է դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, ժամը 2-ին, Հայաստանում իշխանափոխությունից հետո, և օրենքի ուժ չուներ: Թուրքերն ավելի շուտ էին ուզում հասնել դրան, քանի դեռ Հայաստանը չէր խորհրդայնացվել, բայց չկարողացան: Բազմիցս գրվել է, որ Ալ. Խատիսյանը դրան գնացել է ստիպված, Դրոյի անորոշ պատասխանից հետո, ինչպես նաև Կարաբեքիրի՝ Երևան շարժվելու սպառնալիքից դրդված: Բայց մենք կարծում ենք, որ Ալ. Խատիսյանը եթե չստորագրեր պայմանագիրը, թուրքերը հազիվ թե առաջ շարժվեին դեպի Երևան, քանզի դա կնշանակեր կռիվ խորհրդային իշխանության դեմ:

Այսպիսով, ա. Թուրքերի զինադադարի պայմանները և Ալեքսանդրապոլի բանակցությունների սկսվելը ստիպում են Խորհրդային Ռուսաստանին՝ արագացնելու Հայաստանի խորհրդայնացման գործընթացը՝ ամբողջովին այն չկորցնելու նպատակադրումով, բ. Թուրքերը ձգտում են արագորեն պայմանագիր կնքել Հայաստանի հետ, մտածելով, որ կարող է հակառակ դեպքում ռուսները խորհրդայնացված Հայաստանի համար պահանջեն ավելի լայն, ամռվազն մինչև 1914 թվականի սահմանները, գ. Հայաստանի խորհրդայնացումից հետո ռուսները նպատակահարմար չեն գտնում թուրքերին պարտադրել թեկուզ 1914թ. սահմանները, ռուս-թուրքական հարաբերությունների վատթարացման վախով պայմանավորված, դ. Խորհրդային Ռուսաստանը և քեմալական Թուրքիան իրենց միջև Հայաստանը բաժանված են ընդունում այն սահմաններով, որոնք ընկած էին Ալեքսանդրապոլի օրենքի ուժ չունեցող պայմանագրի կետերում: Եվ այդ պայմանագրի սկզբունքները պահպանվեցին հետագայում:

ԿԵՐՉԱԲԱՆՈՒՄ հանրագումարի են բերված ատենախոսության արդյունքները, որոնք համագեցնում են հետևյալ եզրակացություններին.

- 1920թ. սկզբներին Հայաստանի ներքին դրությունը անկայուն էր և պայթունավտանգ, քանի որ ներքին ապստամբ տարրերը՝ թաթարները գաղտնի քանդում էին հայոց անկախության հիմքերը, սակայն դրանց նկատմամբ կառավարությունը վարում էր թողտվության քաղաքականություն:
- Հատունանում էր կուսակցական դիկտատուրա ստեղծելու անհրաժեշտության գաղափարը, որն իրականացնելու համար միայն փոքրիկ առիթն էր պակասում: Բայց այդ առիթը երկար սպասեցնել չտվեց: Ղա Հայաստանի խորհրդայնացման գործընթացի սկիզբն էր:
- 1920թ. ապրիլին հատուկ սցենարով խորհրդայնանում է Ադրբեջանը: Հայ բոլշևիկները թևավորվելով դրանից, ձեռնամուխ են լինում մայիսյան խռովությունների կազմակերպմանը: Սակայն այն ձնչվում է: Հայաստանի

¹⁸ Համաձայնագիրը տես Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ 48, Արժրունի Վ., նշվ. աշխ., էջ 263-264, Великая Октябрьская революция и победа Сожетской власти в Армении (Сборник документов), Ереван, 1957, с. 441 և այլն:

խորհրդայնացման առաջին ձգտումը, որը համահունչ էր նրա բաժանմանը՝ ծախողվում է:

- Հայաստանի խորհրդայնացման առաջին ձգտումը հնարավոր չդարձավ, որովհետև անհրաժեշտ ուժեր չունեին հայ բոլշևիկները: Բացի այդ՝ խորհրդային Ռուսաստանի կողմից այդ հարցը ժամանակավորապես հանվեց: Եվ նաև, անկախությունն ու ազատությունը վեր են ամեն ինչից և ՀՀ Կառավարությունը պարտավոր էր ամեն ինչի գնալ դրանց պահպանման համար:

- Ռուսաստանը դեռևս չէր ձշտել վիճելի համարվող տարածքների Ադրբեջանին նվիրաբերելու հարցը, ինչով պետք է պայմանավորել նաև Լ. Շանթի պատվիրակության բանակցությունների ծախողումը Մոսկվայում: Նա այս հարցերում դեռևս առաջնորդվում էր խուսանավելու քաղաքականությամբ:

- Սևրի դաշնագրի ստորագրվելուց հետո Ռուսաստանը կտրուկ կերպով շրջվեց դեպի Թուրքիան և կոշտ դիրքորոշում որդեգրեց ՀՀ հանդեպ՝ նրան ընկալելով որպես Անտանտի դաշնակից:

- Հայ-թուրքական փոխգիշումային համաձայնությունը, ինչը առաջարկում էր Հ. Տերտերյանը Լ. Շանթին, դրական հետևանքների կարող էր բերել թե հայ-ռուսական և թե հայ-ադրբեջանական հարաբերությունների առումով: Դրանց չկայացումը հանգեցրեց Հայաստանի մեկուսացմանը:

- Օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագիրը չի իրականանում, քանի որ խորհրդային Ռուսաստանը դեռևս քաղաքացիական կռիվները ամբողջովին հոգուտ իրեն չավարտած՝ դանդաղեցնում էր նոր ձևկատի բացումը Հայաստանի հետ: Նա ձգտում էր ժամանակ շահել, քանի որ վերջնականապես չէր ձշտել իր դիրքորոշումը Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի տարածքային պահանջների նկատմամբ:

- Օգոստոսի 24-ի ռուս-թուրքական պայմանագրի նախագծի որոշ կետեր անուղղակիորեն նպաստում են Թուրքիայի՝ Հայաստանի վրա հարձակմանը, քանի որ նրան թույլատրվում էր գրավել Սարիղամիշ-Շահթախտ գիծը: Նա համոզված էր, որ Թուրքիան այդ գծից այն կողմ չի անցնի:

- Ռուսատանը չէր կարող զսպել թուրքերի Շահթախտ-Նախիջևան գծից առաջացումը, ինչքան էլ դա նրա համար լիներ անցանկալի: Ստեղծված պայմաններում բոլշևիկներին մնում էր գնալ Հայաստանի խորհրդայնացմանը, որը թուրքական առաջխաղացման դեպքում արդեն պետք է նշանակեր Հայաստանի բաժանում, իսկ Հայաստանի Հանրապետությանն՝ ապավինել իր ուժերին, որն արդեն տարբեր պատճառներով խոստումնալից ուղի չէր:

- Ընթանում է թթուրք-ռուսական մրցակցություն Հայաստանին տիրելու և այն բաժանելու համար, առանց սահմանների վերջնական ձգարտման: Քեմալականները սոցիալիստի դիմակ էին հագել: Հայկական բանակը չէր դրսևորում անհրաժեշտ մարտունակություն: Ուրեմն հետևությունը մեկը պետք է լիներ՝ անհրաժեշտ է, որ Հայաստանն էլ կարմիր դիմակ հագնի: Բայց այս ըմբռնումը տակավին չկար և երբ ղեկավար շրջանակներում հասավ որոշակի ընդհանրության, արդեն շատ ուշ էր:

- Արևմուտքը ամեն կերպ ձգտել է խոչընդոտել հայերի՝ դեպի Ռուսաստան կողմնորոշումը: Հայ դիվանագիտության պարտության վկայությունն էր այն, որ այն դեպքում երբ Անտանտն էր փորձում լեզու գտնել բոլշևիկների և քեմալականների հետ, դեռևս հույսեր էր կապում այդ նույն դաշնակիցների

հետ: Մյուս կողմից, Հայաստանի կառավարության համար դժվար էր հրաժարվել Սևրի դաշնագրից, ինչին ձգտում էր Ռուսաստանը:

- Հնկտեմբեր ամսին ՀՀ խորհրդայնացումը հիմք կհանդիսանար թուրքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար: Ռուսաստանը, անկախ կայացրած որոշումից, քաղաքական առումով նպատակահարմար չէր համարում կարմիր բանակ մտցնել Հայաստան, զգուշանալով Անտանտից և հատկապես Թուրքիայի շրջադարձից դեպի Արևմուտք:

- Թուրքերը իսկապես ուզեցել են հայերի հետ հաշտության գնալ՝ առանց ռուսական միջնորդության: Սա նշանակում է, որ տեղին չի խոսելը խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև Հայաստանի վերջնական պայմանավորվածության մասին: Բայց այնտեղ, որտեղ հնարավոր է եղել կանգնեցնել թուրքերին, եղել է նախնական սահմանագիծը, որը մղում է դարձյալ այն եզրակացությանը, որ Հայաստանի խորհրդայնացումը համահունչ էր նրա բաժանմանը:

- Ալեքսանդրապոլի բանակցությունների սկսվելը ստիպում են խորհրդային Ռուսաստանին՝ արագացնելու Հայաստանի խորհրդայնացման գործընթացը՝ ամբողջովին այն չկորցնելու նպատակադրումով:

- Հայաստանի խորհրդայնացումից հետո ռուսները նպատակահարմար չեն գտնում թուրքերին պարտադրել թեկուզ 1914թ. սահմանները, ռուս-թուրքական հարաբերությունների վատթարացման վախով պայմանավորված և խորհրդային Ռուսաստանը և քեմալական Թուրքիան իրենց միջև Հայաստանը բաժանված են ընդունում այն սահմաններով, որոնք ընկած էին Ալեքսանդրապոլի օրենքի ուժ չունեցող պայմանագրի կետերում: Եվ այդ պայմանագրի սկզբունքները պահպանվեցին հետագայում: Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացման գործընթացն ընթացավ ոչ այն ծրագրով, որը նախատեսել էր Բ. Լեգրանը՝ իր անմիջական ղեկավար Գ. Չիչերինի հետ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Գաբրիելյան Գ. Ֆ., 1920 թ. օգոստոսի 24-ի ռուս-թուրքական համաձայնագրի նախագիծը և դրա անդրադարձները հայ-ռուսական հարաբերությունների վրա, «Հայագիտական հանդես», Խ. Աբովյանի անվան ՀԳՄՅ գիտական հանդես, Երևան, 2010, N 3(14), էջ 143-152:
2. Գաբրիելյան Գ. Ֆ., Ս. Վրացյանի կառավարության բանակցությունները Բ. Լեգրանի հետ և ՀՀ խորհրդայնացումը, Էջմիածին, 2011, Դ, ապրիլ, էջ 75-82:
3. Գաբրիելյան Գ. Ֆ., Մոսկվայում հայ-թուրքական բանակցությունների անհրաժեշտության հարցը և դրանց չկայանալու հետևանքները 1920 թ. հուլիսին, ԿԱՆԹԵՂ, Երևան, 2011, N 4(49), էջ 105-111:
4. Գաբրիելյան Գ. Ֆ., Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման գործընթացի սկիզբը 1920 թ. գարնանը և դրա ձախողման պատճառները, «Հայագիտական հանդես», Խ. Աբովյանի անվան ՀԳՄՅ գիտական հանդես, Երևան, 2011, N 2-3(16-17), էջ 129-137:

ГАБРИЕЛЯН ГЕОРГИ ФЕЛИКСОВИЧ

ВЗАИМООТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И СОВЕТСКОЙ РОССИИ В МАЕ-ДЕКАБРЕ 1920 г.

Диссертация на соискание ученой степени кандидата
исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 16-го марта 2012 г. в 14⁰⁰, на заседании
специализированного совета 004 при институте истории НАН РА
(0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

В диссертации на основе новоявленных архивных материалов, публикаций прессы, научных трудов и созданных в диаспоре мемуаров представлены армяно-русские отношения в период, охватывающий май-декабрь 1920г. Работа состоит из предисловия, четырех глав, заключения/послесловия, списка использованных источников и литературы.

В первой главе представлена внутривнутриполитическая ситуация в РА весной 1920г. Доказывается, что демократическая суть государства, которая в других условиях, возможно, была бы похвальной, не исходила из реальных интересов Армении. Правительство Ал.Хатисяна проводило политику попустительства в отношении оппозиционных политических элементов и татарских мятежных районов, которые ждали удобного повода, чтобы погубить его. 28 апреля 1920г. по специальному сценарию был советизирован Азербайджан. Большевики Армении, окрылившись этим, инициировали организацию майских мятежей. Однако они были подавлены. Первое стремление советизировать Армению, созвучное ее разделению, провалилось.

Вторая глава посвящена переговорам возглавляемой Л.Шантом делегации в Москве. Переговоры провалились, поскольку Советская Россия все еще не уточнила своей окончательной позиции в отношении Азербайджана, кемалистской Турции и РА. Показывается, что причиной провала этих переговоров стала также деятельность находившейся в те же дни в Москве делегации Бекира Сами бея, а также сделанное правительству РА предложение отказаться от намеченного в Севре совещания, что было нелегкой задачей.

Третья глава посвящена подписанному 10 августа в Тифлисе русско-армянскому соглашению и проекту русско-турецкого договора от 24 августа. Одним из важнейших условий русско-армянского договора была временная военизация ?? Карабаха, Зангезура и Нахичевана, (Россия считала их спорными). Однако это соглашение также не воплотилось в жизнь. По проекту русско-турецкого договора от 24 августа Россия признавала созданный М.Кемалем Национальный союз. Доказывается, что некоторые пункты этого договора косвенно способствовали нападению Турции на Армению, поскольку ей разрешалось захватить линию Сарыкамыш-Шахтахт. Она была убеждена, что Турция не перейдет дальше этой линии. Однако Карабекир паша, считая Армению союзницей Антанты, продол-

жал свое продвижение, будучи уверенным, что Россия не вмешается.

В четвертой главе представлены переговоры правительства РА с Б. Лиграном и завершение процесса советизации. Показывается, что прибывший в Ереван Б.Легран пытался убедить правительство РА отказаться от Севрского договора и обратиться к посредничеству России с тем, чтобы остановить нашествие Карабекира. Составляется проект соглашения 28 октября, который также не подписывается. Армянская армия отступает. Правительство РА, не имея другого выхода, вступает на унижительных условиях в переговоры с Карабекиром. Вскоре Б.Легран представляет правительству РА ультиматум о советизации и вводит советские войска на территорию РА. Фактически, в противном случае Россия опасалась, что ее вооруженное вмешательство могло склонить Кемалья к Антанте, что вовсе не было выгодно ей. 2 декабря Россия подписала с Лиграном соглашение о советизации Армении. Этим же было обусловлено то, что Россия в дальнейшем признала принципы Александропольского договора. Таким образом, Западная Армения, а также границы Карса 1914г. были уступлены Турции не по заранее обозначенной линии, а в результате развития событий. К сожалению, в сложившихся условиях армянские политические деятели не сориентировались правильно, и Армения понесла тяжелое дипломатическое поражение, потеряв свою независимость, свободу и большую часть исторических территорий.

В послесловии обобщены основные результаты и заключения исследования.

GABRIELYAN GEORGE FELIKS

THE RELATIONS BETWEEN REPUBLIC OF ARMENIA AND SOVIET RUSSIA FROM MAY TO DECEMBER 1920

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on March 16 2012, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004, by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

On the base of archive new documents, press publications, researches and Diaspora memorandums are shown Armenian-Russian relations from May to December 1920. The work consists of an introduction, four main chapters, a conclusion and a bibliography.

The first chapter deals with RA internal political situation in spring 1920. It is proven that country's democratic essence wasn't in the interests of Armenia, which in another case would be praiseworthy. A. Khatisyan legitimated connivance policy against the political oppositional members and Tatar rebels who rebel from the first occasion _ to destroy it. On April 28, 1920 Azerbaijan became Soviet in a special scenario.

Bolsheviks in Armenia encouraging from it started to organize May rebelliousness. But anyway it was forced. Armenia's the first aspiration for sovietization which was consonant with its separation was failed.

The second chapter deals with the information about L. Shant lead delegation's negotiations in Moscow where is shown that it was failed as Soviet Russia hadn't still adjust it's last position about Azerbaijan, kemal Turkey and Armenia.

It is shown that the reason for already failed negotiations was the same days actions of Bekir Sam Bay's in Moscow, also the offer of RA government which was to refuse the call together meeting in Sevr, which wasn't an easy thing.

The third chapter is dedicated to the Armenian-Russian agreement signed in Tbilisi on August 10, 1920 and Russian- Turkish draft agreement on August 24. One of the most important points of Armenian-Russian agreement was that Russia should blockade Nagorno Karabakh, Zangezur and Nakhijevan considering these arguable.

But this agreement didn't become true. By the Russian-Turkish graft agreement on August 24, Russia recognize M. Kemal national oath. It is already

proven that draft agreement had some points which indirectly assisted on Turkish attack upon Armenia as they allowed to occupy Sarighamish-Shahtakht line. He was sure that Turkey won't go ahead from that line. But Karabashir pasha considering Armenia as Antant allied went on it's offensives being sure that Russia won't meddle.

The fourth chapter introduces the negotiations of RA government with B. Legran and the end of sovietization. It shows that Legran arrived in Yerevan tried to prevail RA government to refuse Sevr agreement and apply for Russian mediation in order to stop Karabekir raid. Constructed draft agreement of October 28, which also hadn't been signed.

Armanian army retreated. Didn't have any chance RA government in humiliating conditions started its negotiations with Karabekir. Soon Legran introduces sovietization message to RA government and insert Soviet army to Armenia.

In fact Russia afraid that its armed interference could turn Kemal to Antant, which wasn't advantageous for them. On December 2 was signed an agreement with Legran about Armenian Sovietization.

So coming from the same reason Russia in the future accept Aleksandrapol agreement's principles.

So Western Armenia and Kars frontier in 1914 were cede to Turkey. But unfortunately in this situation Armenian politicians didn't orientate right and Armenia had great diplomatic loss __ losing its independence and great parts of its historical areas.

In the conclusive part was shown the main results of research.